

1. Հէյ, ճամփեք, ոլոր, մոլոր
2. Ի՛նչ գով գիշեր է
3. Էրեբունի Երևան
4. Երևանում տոն է
5. Այստեղ եմ ծնվել
6. Իրիկնային Երևան
7. Երևանի գիշերները
8. Գարուն Երևան

Երգ ճանապարհի
Երաժշտ.՝ Կ. Օրբելյանի

Հէ՛յ, ճամփեք ոլոր-մոլոր և արև անմար,
Ես կտամ կյանքն իմ բոլոր ձեր սիրո համար:
Հէ՛յ, դաշտեր, դաշտեր բարի, ձեզ էլ բյուր բարև,
Ինձ օգնեք՝ գտնեմ յարիս, իմ պայծառ արև:

Սիրտ իմ, քո ճամփին երգն ուրախ թող միշտ հնչի
Ու թող դառնա թռչուն և թռչի, թռչի,
Գարուն, գարուն եկավ ծաղկով իր քնքուշ,
Գարնան հետ եկավ իմ սերն անուշ:

Ես ճամփա ելա ծեղին՝ վառ սիրով անշեջ,
Չանսալով հողմին, մեզին, պիտ քայլեմ անվերջ,
Հէ՛յ, ճամփեք, ճամփեք բարի, ձեզ էլ բյուր բարև,
Ա՛խ, օգնեք՝ գտնեմ յարիս, իմ լույս, իմ արև:

Սիրտ իմ, քո ճամփին երգն ուրախ թող միշտ հնչի
Ու թող դառնա թռչուն և թռչի, թռչի,
Գարուն, գարուն եկավ ծաղկով իր քնքուշ,
Գարնան հետ եկավ իմ սերն անուշ:

Երևանում տոն է

Խոսք՝ Հովհաննես Ղուկասյանի
Երաժշտություն՝ Արտեմի Այվազյանի

1. Երևանում տոն է, թող բոլորը գան,
Օդը հրաշալի է, ջուրն անմահական,
Նա մի բուրաստան է՝ վեհ ու ձյունաթափ,
Մեր Մասիսների սուրբ վառ հայացքի տակ:

Հե՛յ, ջան, Երևան, մեր մայր օրորան,
Հե՛յ, ջան, հե՛յ, ջան, դու իմ Երևան:

2. Չի ապրել կյանքում ով գեթ իմ երագում,
Չի տեսել աստղերն ու մեր ծաղկունքը ծով,
Իսկ մեր աղջիկները, սերն է իմ վկա,
Ով նրանց տեսնում է՝ էլ հանգիստ չկա:

Հե՛յ, ջան, Երևան, մեր մայր օրորան,
Հե՛յ, ջան, հե՛յ, ջան, դու իմ Երևան:

Սա Երևանն է

Ինչ գով գիշեր է, մեկն ինձ հիշել է,
Նա ինձ հուշել է անհիշելին,
Նա է իմ հույսը, անտարակույսը,
Նա է իմ լույսը մութ գիշերին:

Նա ով եկել էր, կյանքս բեկել էր,
Բախտս թեքել էր ինքն իր բախտին,
Բայց արդեն ուշ է, հուշը մշուշ է,
Մերը քնքուշ էր կեսգիշերին:

Ներս արի, ներս արի, ինչ ես կանգնել,
Ինչ ես հիմար ժպիտով քարացել,

Մա Երևանն է, այստեղ դու տանն ես,
Ուր քեզ սպասում են դեռ կեսգիշերին,
Ուր կամ սիրում են, կամ հայհոյում են,
Երբ հիշեցնում են անհիշելին:

Ներս արի, ներս արի, ինչ ես կանգնել,
Ինչ ես հիմար ժպիտով քարացել,
Մա քո փողոցն է, կյանքի դպրոցն է,
Ուր քեզ հիշում են, դեռ չեն մոռացել:
Մա քո փողոցն է, կյանքի դպրոցն է,
Ուր քեզ հիշում են, դեռ չեն մոռացել:

Ինչ գով գիշեր է, մեկն ինձ հիշել է,
Նա ինձ հուշել է անհիշելին,
Բայց արդեն ուշ է, հուշը մշուշ է,
Մերը քնքուշ էր կեսգիշերին:
Բայց արդեն ուշ է, հուշը մշուշ է,
Մերը քնքուշ էր կեսգիշերին....

Էրեբունի – Երևան

1. Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

կրկնակ.

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի:
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան:

2. Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,

Անկատար տենչեր ունենք դեռ շատ:
Մեր կյանքն առանց քեզ իզուր կկորչի,
Առանց քեզ մեր տաք տենչն էլ կսառչի:

կրկնակ.

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի:
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան:

3. Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզնով արբել:
Տաք է սերը մեր շեկ քարերիդ պես,
Հին է սերը մեր ձիգ դարերիդ պես:

Իմ Երևան

Խոսք՝ Վլադիմիր Հարությունյանի
Երաժշտություն՝ Առնո Բաբաջանյանի

1. Այստեղ եմ ծնվել ես, այստեղ մեծացել,
Այս ջուրը խմել սառնորակ,
Հազար ճանապարհ ես դու իմ դեմ բացել,
Իմ լավ, հարազատ իմ քաղաք:

Քարըդ քարիդ եմ շարել,
Քեզ հետ հասակ եմ առել,
Իմ Երևան, քո ամեն շենքի հետ
Ես իմ կյանքն եմ կապել առհավետ:

կրկնակ.

Քեզ միշտ սիրել եմ, իմ վարդագույն ընկեր,
Քեզնով ապրել եմ, քեզ միշտ երգել,
Դու անխավար լույսի տուն, Երևան,
Ամեն հայի հույսի տուն, Երևան:

2. Միրում եմ գարունը փարթամ ու լուսեղ,
Աշունդ՝ ոսկե մի երագ,
Նորքիդ բարդիները նագուկ ու վսեմ,
Զանգվիդ կոհակները փիրուզ:

Քեզ հետ կիսել եմ ես միշտ
Թե խնդություն և թե վիշտ,
Իմ Երևան քո ամեն երգի հետ
Ես իմ կյանքն եմ կապել առհավետ:

կրկնակ.
Քեզ միշտ սիրել եմ, իմ վարդագույն ընկեր,
Քեզնով ապրել եմ, քեզ միշտ երգել,
Դու անխավար լույսի տուն, Երևան,
Ամեն հայի հույսի տուն, Երևան:

Իրիկնային Երևան

1. Երեկոն է երբ իջնում,
Գրկում մով այգին,
Զահեղներն են միշտ շրջում՝
Երգը շուրթերին:

կրկնակ.
Աստղերից էլ վառ,
Արևից անմար,
Դա մեր սերն է,
Մեր հույզերն են,
Մեր ուղին պայծառ:

2. Ուռիներն են կապտաշոր
Երգը լուռ լսում,
Բարդիներն են մեղմօրոք
Երգի հետ նագում:

կրկնակ.
Աստղերից էլ վառ,
Արևից անմար,
Դա մեր սերն է,
Մեր հույզերն են,
Մեր ուղին պայծառ:

3. Ու թռչում է երգը մեր,
Մտնում բակ ու տուն,
Ծածանում սիրո հույսեր
Ամեն մի սրտում:

կրկնակ.
Աստղերից էլ վառ,
Արևից անմար,
Դա մեր սերն է,
Մեր հույզերն են,
Մեր ուղին պայծառ:

Երևանի գիշերները

Խոսք՝ Ա. Գրաշու, երաժշտ.՝ Ա. Դոլուխանյանի
Երևանի գիշերները կապուտակ
Սիրո հազար երգ են վառել կրծքիս տակ,
Գարնան նման Երևանը մեր ժպտուն,
Քո սիրո հետ միշտ շողում է իմ սրտում:

Երևանի գիշերները հովասուն
Ձեր պարտեզում պայծառ հեքիաթ են ասում,
Ամեն ծաղկում չքնաղ դեմքն եմ քո տեսնում,
Կրծքիդ հևքն եմ, սրտիդ երգն եմ ես լսում:

Երևանի գիշերները լուսավառ
Ինձ դարձրել են սև աչքերիդ սիրահար,
Երբ կարոտով քեզ գրկում եմ, համբուրում
Ինձ տենում եմ սև աչքերիդ հայելում:

Գարուն Երևան

1. Գարուն Երևան, սիրուն Երևան,
Վարդեր ես ճամփիս փռում Երևան.
Ուր էլ գնամ, ուր էլ մնամ,
Քեզ եմ հավիտյան սիրում Երևան:

կրկնակ.

Իմ ջահել սրտի վառ ու վառման հույսն ես, Երևան,
Իմ ժողովրդի անուշ աչքի լույսն ես Երևան,
Իմ Հայաստանի զարդն ես Երևան:

2. Զուգվել, զարդարվել, շորերով ավան,
Դու նորահարս ես դարձել Երևան,
Հայրենական գարնան գրկում
Մաղկի՛ր, ծիծաղիր, երգի՛ր Երևան:

կրկնակ.

Իմ ջահել սրտի վառ ու վառման հույսն ես, Երևան,
Իմ ժողովրդի անուշ աչքի լույսն ես Երևան,
Իմ Հայաստանի զարդն ես Երևան:

3. Երգը շրթունքիս, կռիվ գնացի,
Քո կյանքի համար, անվախ կռվեցի,
Կրակ կռվում, կրակ հեռվում,
Պատկերիդ պայծառ, կարոտ մնացի:

կրկնակ.

Իմ ջահել սրտի վառ ու վառման հույսն ես, Երևան,

Իմ ժողովրդի անուշ աչքի լույսն ես Երևան,
Իմ Հայաստանի զարդն ես Երևան: